ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ և ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ ԴԱՎԻԹ ԽԻԹԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ «ԽԻՍՏ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ» ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ N 2-Ա

ք. Երևան 28.12.2023թ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի, 220-րդ հոդվածի 1-ին մասերի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 224-րդ հոդվածի, 226-րդ հոդվածի 1-ին մասի և 227-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով 2023 թվականի դեկտեմբերի 22-ին «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին Դավիթ Խիթարյանի ներկայացրած գրավոր պարզաբանումները (բացատրությունը)՝

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է՝**

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) անշարժ և շարժական գույքի տնօրինումը (մասնավորապես՝ Շարժական գույքի վարձակալության պայմանագիր՝ կնքված 01.09.2022 թվականին Հիմնադրամի և «Էլլադա Հովսեփյան Սարգսի» ԱՁ-ի միջև, Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր՝ կնքված 30.09.2022 թվականին Հիմնադրամի և Դրաստամատ Գագիկի Մուրադյանի միջև) օրենսդրությամբ սահմանված կարգի (ՀՀ Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշում, Հիմնադրամի կանոնադրության 22-րդ կետի 6-րդ ենթակետ) խախտմամբ իրականացնելու համար **Հիմնադրամի տնօրեն/ռեկտոր Դավիթ Խիթարյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժ:**

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԿԱՐԵՆ ԳԻԼՈՅԱՆ**

Հայաստանի Հանրապետություն

29.12.2023թ.